ջանայ կամ հանելով ի հայրանական (?!) աթոռոյն, նոյնպէս ինքն ի քսէ. կորեալ և հեռացեալ ամէն։

16. *111 բ. Շեղագրին մօտ բոլորգրով.*

Ցանուն յայ.(?!) ես Ովանէս ու կոզայկիցս իմ Թանգուղ տվինք մեր աւժարուբ. զմեր որդիս Մարգարէ հոգոյ որդի Մովէս(?!) քհի. մինչև մահն որ երէց առնէ վկայուբ. Աբուկանայ Ալփիկայ որդոյ, Բեկիկայ Խոչտոայ Լարեցի. զինչ մգ. որ զայս բանս խաբանէ։ ՅժԸ։ հյ. կապ. ի թվ. ՊԼԶ.։

Ես Խաչայտուր երէցս վկայ, որ զգիրս գրեցի։

17. *111 բ. Անվարժ շեղագրով.*

Ցանուն այ. ես Սարխութա Մայլիքայ որդի միաբանեցայ սբ. աւետարանիս ու տուի զիմ աղջիկս զէսան Մուսէս իրիցոյ, ով խաբանէ դատի այ. ով կարդէք լի բերանով ասացէք, ած. ողորմի Մալիքայ ամէն. զԱրութէն պահեսցի խորին ծերութենն։

18. *173 բ. Մարկոսի վերջում, բոլորգրով.*

Բարէխաւսութբ. սբ. ածածնին եւ սբ. կենսատու խաչին թողցէ զանցանս պարոն Ուլուխաթունին, զներեխն և զաններելին, զկամային և զանկամային։

Զի յոյժ հնացեալ էր սբ. աւետարանս եւ ետ նորոգել զսա ի ժամանակիս, որ է Մատխան եկն Թավրէզ։ Թվ. ԶԽԶ.։ և որ հանդիպիք, յիշէք զպրն. Ուլուխաթուն և զեւր ծնաւղսն. և ած. ողորմի ա(սա)ցէք նոց.

Եւ զիս զչեմ արժան ծառայս զՏիրաւաքս յաղաւթս յիշեցէք և իշողքդ արժանի լիցիք արքայութենն այ.։

Ցիշեցէք և զՇահրիարն և զամ. արեան մերձաւորն իւր։

19. *112 ա. Ես Շնահաւորիկս միաբանեցայ սբ. ուխտիս Մեծ կողմանց աթոռոյս, յաղաւթս յիշեցէք եւ յետ կատարման իմոյ հանգիստ իմ սաստ լիցի։*

Գ.

Այժմ անցնինք մանրանկարչութեան նկարագրութեան. սկզբում 6 բ — 7 ա, 8 բ — 9 ա, 10 բ — 11 ա, 12 բ — 13 ա, 14 բ — 15 ա, խորաններն են, կամար ես կոչուած յունարէն καμάρα բառի փոխառութեամբ։ Առաջին զոյգը վերից վար եւ իրար կցուած երեք կիսաշրջանակներ են, որոնց միջի տարածութեան վերայ գրուած է Եւսեբիոսի և Կարպիանոսի թղթակցութիւնը։ Կիսաշրջանները անմիջապէս եզերող շրջանակները կապոյտ են, երկու ոսկեգծերի մէջ, շրջափակուած կարմրագիծ մի քառանկիւնում։ Այս քառանկիւնու և կիսաշրջանների մէջ եղած տարածութիւնը ծածկուած է կանաչ եւ կապոյտ ադիւսանման զարդերով, իրարից բաժանուած ոսկեգծերով։ Այս քառանկիւնին շրջանակուած է դարձեալ մի աւելի մեծ քառանկիւնի եզերազարդով, որի մոտիւներն են մէջ ընդ մէջ եռատերեւի և հնգատերեւի մի շարք, կապուած իրար հետ ցօղուններով, եռատերեւները բոլորակի մէջ, իսկ հնգատերեւները ներքեւից փոքրիկ ալեղներով կապուած նրանց հետ։ Եռատերեւների ներքեւի զոյգ թերթերը կապոյտ են, եզերուած սպիտակով, իսկ վերեւի տերեւը, որ բարձրանում է երկուսի միջից, կանաչ տերեւների հպման երկու անկիւններում մի մի կարմիր գնդակ։ Հնգատերեւի ներքեւի զոյգը ըստ ամենայնի նման եռատերեւի ներքեւի զոյգ տերեւներին, իսկ նրանցից ծլած կանաչ տերեւները սրածայր. երկու կանաչ տերեւի մէջ տեղում մի կարմիր տերեւ։ Շրջանակի ձախ թեւի մէջ տեղում մի վարդեակ, կանաչ եւ կապոյտ տերեւներով, պտտում կարմիր գնդակ։ Վերեւի անկիւններում մի մի երկար և ոճաւորած հնգատերեւով զարդ. ներքեւի տերեւները կապոյտ, միջինները կանաչ, իսկ ծայրինը կարմիր, տերեւների հպման տեղերում մի մի կարմիր գնդակ։ Ճակատի զարդը կազմուած է արմաւենիկից։ Բոլորովին այն կազմութիւնն ունի և 7 ա., միայն այս տեղ ադիւսաձեւ զարդերը անկիւնից անկիւն կտրուած, խաչաձեւ թեք գծերով, հուպ տուած քառանկիւնիների մէջ։ Ներքեւի լուսանցքի եզերազարդն էլ ցօղունների հիւսուածք է։ Արտաքին շրջանակների եզերը ծածկուած ոսկեփոշով, բայց արդէն գունատուած և մասամբ թափուած։

Աւելի հետաքրքրական են 8 բ — 9 ա. իրար նմանութիւն բերող խորանները, (պատկեր 1), իւրաքանչիւրը 21 × 14 սմ.